



ք. Երևան

05.06.2017թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի
թիվ ՍՑ-31/17**

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի (այսուհետ նաև՝ Խորհուրդ) բողոքը քննող հանձնաժողովը՝ գործելով Խորհրդի անունից և ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 21.04.2016թ. թիվ 1/73-1/12587-16, 11.05.2016թ. թիվ 1/73-1/13942-16 և 24.06.2016թ. թիվ 1/73-1/17115-16 գրություններով ներկայացված «Արտաշատի պահածոների գործարան» ԲԲԸ-ին (ՀՎՀՀ 04200616) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքը (այսուհետ նաև՝ ՍՑ-31/17 բողոք), «ՀՀ Արարատի մարզի Մրգավանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի 13.04.2016թ. թիվ 238, ՀՀ Սյունիքի մարզպետարանի 21.06.2016թ. թիվ 01/04/1/2729-16 և «Այնթապի Արամ և Հասմիկ Կարամանուկյանների անվան թիվ 1 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի 05.05.2016թ. թիվ 102 գրությունները, պարզեց հետևյալը.

1. ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը

ՀՀ ֆինանսների նախարարությունը (այսուհետ նաև՝ Նախարարություն), ՀՀ Արարատի մարզի «Մրգավանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի 13.04.2016թ. թիվ 238, «Այնթապի Արամ և Հասմիկ Կարամանուկյանների անվան թիվ 1 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի 05.05.2016թ. թիվ 102 և ՀՀ Սյունիքի մարզպետարանի 21.06.2016թ. թիվ 01/04/1/2729-16 գրությունների հիման վրա, համապատասխանաբար 21.04.2016թ. թիվ 1/73-1/12587-16, 11.05.2016թ. թիվ 1/73-1/13942-16 և 24.06.2016թ. թիվ 1/73-1/17115-16 գրություններով դիմել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին (այսուհետ նաև՝

Կենտրոն)՝ խնդրելով ուսումնասիրել «Արտաշատի պահածոների գործարան» ԲԲԸ-ին (այսուհետ նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ Ցուցակ) ներառելու հիմքերը և այդպիսի հիմքերի առկայության դեպքում ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ Ընկերությանը Ցուցակում ներառելու համար:

ՀՀ ֆինանսների նախարարությունը Կենտրոնին է ներկայացրել նաև վերոհիշյալ գրություններին կից ներկայացված փաստաթղթերի պատճենները:

2. «Արտաշատի պահածոների գործարան» ԲԲԸ-ի ներկայացրած փաստաթղթերը և դիրքորոշումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը կարծիք ստանալու նպատակով 13.05.2016թ. թիվ 01/04.1/1852-16 գրությամբ դիմել է «Արտաշատի պահածոների գործարան» ԲԲԸ-ին, սակայն Ընկերության կողմից որևէ դիրքորոշում չի ներկայացվել:

3. ՀՀ Արարատի մարզի «Մրգավանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի ներկայացրած փաստաթղթերը և դիրքորոշումը

ՀՀ Արարատի մարզի «Մրգավանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ը 13.04.2016թ. թիվ 238 գրությամբ ՀՀ ֆինանսների նախարարությանն է ներկայացրել «ԱՀԴ-ՇՀ-ԱՊՁԲ-15/2-30» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին վերաբերող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերի պատճենները:

Միևնույն ժամանակ, Պատվիրատուն վերոհիշյալ գրությամբ հայտնել է, որ ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված տվյալների ճշտման նպատակով հարցում է կատարել Նախարարությանը, որին պատասխան՝ ստացվել է եզրակացություն, ըստ որի՝ «Արտաշատի պահածոների գործարան» ԲԲԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ (11.01.2016թ.) ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություն 3 796 465 ՀՀ դրամի չափով:

4. ՀՀ Արարարի մարզի «Այնթապի Արամ և Հասմիկ Կարամանուկյանների անվան թիվ 1 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի ներկայացրած փաստաթղթերը և դիրքորոշումը

«Այնթապի Արամ և Հասմիկ Կարամանուկյանների անվան թիվ 1 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ը 05.05.2016թ. թիվ 102 գրությամբ ՀՀ ֆինանսների նախարարությանն է ներկայացրել «ԱՅՆ1ՄԴ-ՇՀԱՊԶԲ-16/1» ծածկագրով գնման ընթացակարգին վերաբերող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերի պատճենները:

Մինևույն ժամանակ, «Այնթապի Արամ և Հասմիկ Կարամանուկյանների անվան թիվ 1 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ը հայտնել է, որ Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված տվյալների ճշտման նպատակով վերջինս հարցում է կատարել ՀՀ ֆինանսների նախարարություն, որին ի պատասխան ստացվել է եզրակացություն, ըստ որի՝ «Արտաշատի պահածոների գործարան» ԲԲԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ (12.01.2016թ.) ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություն 3 801 978 ՀՀ դրամի չափով:

5. ՀՀ Սյունիքի մարզի «Կապանի թիվ 1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի ներկայացրած փաստաթղթերը և դիրքորոշումը.

ՀՀ Սյունիքի մարզպետարանը 21.06.2016թ. թիվ 01/04/1/2729-16 գրությամբ ՀՀ ֆինանսների նախարարությանն է ներկայացրել «ԿՄՀԴ-ՇՀԱՊԶԲ-16/2» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին վերաբերող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերի պատճենները:

ՀՀ Սյունիքի մարզպետարանը Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված տվյալների ճշտման նպատակով հարցում է կատարել ՀՀ ֆինանսների նախարարություն, որին ի պատասխան ստացվել է եզրակացություն, ըստ որի՝ «Արտաշատի պահածոների գործարան» ԲԲԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ (11.02.2016թ.) ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն 506 881 ՀՀ դրամի չափով:

ՀՀ Սյունիքի մարզպետարանը նույն գրությամբ թյուրիմացաբար նշել է, որ Ընթացակարգի արդյունքում Ընկերության հետ կնքված պայմանագիր է լուծվել:

6. ՍՑ-ԳԲԽ-31/17 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՀՀ ֆինանսների նախարարության 21.04.2016թ. թիվ 1/73-1/12587-16, 11.05.2016թ. թիվ 1/73-1/13942-16 և 24.06.2016թ. թիվ 1/73-1/17115-16 գրություններով ներկայացված «Արտաշատի պահածոների գործարան» ԲԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ Արարատի մարզի «Մրգավանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի կողմից կազմակերպված «ԱՀԴ-ՇՀ-ԱՊՁԲ-15/2-30» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի (այսուհետ նաև՝ Ընթացակարգ 1) վերաբերյալ.

- Ընթացակարգ 1-ին մասնակցելու նպատակով «Արտաշատի պահածոների գործարան» ԲԲԸ-ն **11.01.2016թ.** հայտ է ներկայացրել:

- Ընկերությունը հայտի N 2 հավելվածով՝ Ընթացակարգ 1-ին մասնակցելու նպատակով իրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությամբ, հայտնել և հավաստել է, որ **հայտը ներկայացվելու օրվա դրությամբ չունի ժամկետանց հարկային պարտքեր՝ Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:**

- ՀՀ Արարատի մարզի «Մրգավանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ը Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն, տվյալների ճշտման մասին կատարած հարցմամբ խնդրել է Նախարարությանը տրամադրել տեղեկատվություն «Արտաշատի պահածոների գործարան» ԲԲԸ-ի վերաբերյալ:

- Ի պատասխան վերոհիշյալ հարցմանը՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ՀՀ Արարատի մարզի «Մրգավանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ին տրամադրվել է եզրակացություն, համաձայն որի՝ Ընկերությունը 2016թ. հունվարի 11-ի դրությամբ (հայտը

ներկայացնելու օրվա դրությամբ) ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն՝ 3 796 465 ՀՀ դրամի չափով:

2. ՀՀ Արարարի մարզի «Այնթապի Արամ և Հասմիկ Կարամանուկյանների անվան թիվ 1 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի կողմից կազմակերպված «ԱՅՆ1ՄԴ-ՇՀԱՊՁԲ-16/1» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի (այսուհետ նաև՝ Ընթացակարգ 2) վերաբերյալ.

- Ընթացակարգ 2-ին մասնակցելու նպատակով «Արտաշատի պահածոների գործարան» ԲԲԸ-ն **12.01.2016թ.** հայտ է ներկայացրել:

- Ընկերությունը հայտի N 2 հավելվածով՝ Ընթացակարգ 2-ին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին՝ իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությամբ, հայտնել և հավաստել է, որ **հայտը ներկայացնելու օրվա դրությամբ չունի ժամկետանց հարկային պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:**

- «Այնթապի Արամ և Հասմիկ Կարամանուկյանների անվան թիվ 1 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ը Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն, տվյալների ճշտման մասին կատարած հարցմամբ խնդրել է Նախարարությանը տրամադրել տեղեկատվություն «Արտաշատի պահածոների գործարան» ԲԲԸ-ի վերաբերյալ:

- Ի պատասխան վերոհիշյալ հարցմանը՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից «Այնթապի Արամ և Հասմիկ Կարամանուկյանների անվան թիվ 1 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ին տրամադրվել է եզրակացություն, համաձայն որի՝ Ընկերությունը 2016թ. հունվարի 12-ի դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն՝ 3 801 978 ՀՀ դրամի չափով:

3. ՀՀ Սյունիքի մարզի «Կապանի թիվ 1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կողմից կազմակերպված «ԿՄՀԴ-ՇՀԱՊՁԲ-16/2» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի (այսուհետ նաև՝ Ընթացակարգ 3) վերաբերյալ.

- Ընթացակարգ 3-ին մասնակցելու նպատակով «Արտաշատի պահածոների գործարան» ԲԲԸ-ն **11.02.2016թ.** հայտ է ներկայացրել:

• Ընկերությունը հայտի N 2 հավելվածով՝ Ընթացակարգ 3-ին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությամբ, հայտնել և հավաստել է, որ **հայտը ներկայացվելու օրվա դրությամբ չունի ժամկետանց հարկային պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:**

• ՀՀ Սյունիքի մարզի «Կապանի թիվ 1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ը, Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն, տվյալների ճշտման մասին կատարած հարցմանը խնդրել է Նախարարությանը տրամադրել տեղեկատվություն «Արտաշատի պահածոների գործարան» ԲԲԸ-ի վերաբերյալ:

• Ի պատասխան վերոհիշյալ հարցմանը՝ Նախարարության կողմից «Կապանի թիվ 1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ին տրամադրվել է եզրակացություն, համաձայն որի Ընկերությունը 2016թ. փետրվարի 11-ի դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն՝ 506 881 ՀՀ դրամի չափով:

7. խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ **գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք ունեն ժամկետանց պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:**

Նույն հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, **եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեղծ տվյալ:**

Օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետի համաձայն՝ ՀՀ գնումներին բողոքարկման խորհուրդն իրավունք ունի որոշում կայացնելու մասնակցին գնումների գործընթացին մասնակցության իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

Կարգի 35-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ իր կողմից հաստատված հայտարարություն՝ օրենքով նախատեսված մասնակցության իրավունքի և հրավերով սահմանված որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին:

Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն հարցում է ներկայացնում առաջին և հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև նույն կարգի 67-րդ կետով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 48-րդ կետի համաձայն՝ եթե Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված հարցմանն ի պատասխան տրամադրված եզրակացության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա՝

1) հայտերի գնահատման արդյունքների հրապարակման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է, և

2) այդ մասնակցի տվյալները գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով ի հայտ եկած հանգամանքների մասին տեղեկությունները պատվիրատուի կողմից ուղարկվում են Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն՝ դրանց ի հայտ գալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում:

Այսպիսով, «Արտաշատի պահածոների գործարան» ԲԲԸ-ն Ընթացակարգ 1-ին, Ընթացակարգ 2-ին և Ընթացակարգ 3-ին մասնակցելու նպատակով համապատասխանաբար **11.01.2016թ., 12.01.2016թ. և 11.02.2016թ.** ներկայացրած հայտերի N 2 հավելվածներով՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարություններով հայտնել և հավաստել է, որ **հայտերը ներկայացվելու օրերի դրությամբ չունեն**

Ժամկետանց հարկային պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:

ՀՀ Արարատի մարզի «Մրգավանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի, ՀՀ Արարատի մարզի «Այնթապի Արամ և Հասմիկ Կարամանուկյանների անվան թիվ 1 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի և ՀՀ Սյունիքի մարզի «Կապանի թիվ 1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կողմից Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված տվյալների ճշտման մասին կատարված հարցմանն ի պատասխան Նախարարության կողմից տրամադրվել են եզրակացություններ, համաձայն որոնց Ընկերությունը հայտերը ներկայացնելու օրերի դրությամբ ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություններ, մասնավորապես 11.01.2016թ. դրությամբ՝ 3 796 465 ՀՀ դրամի չափով, 12.01.2016թ. դրությամբ՝ 3 801 978 ՀՀ դրամի չափով և 11.02.2016թ. դրությամբ՝ 506 881 ՀՀ դրամի չափով:

Խորհուրդը գտնում է, որ «Արտաշատի պահածոների գործարան» ԲԲԸ-ի կողմից Ընթացակարգ 1-ի, 2-ի և 3-ի շրջանակներում համապատասխանաբար՝ 11.01.2016թ., 12.01.2016թ. և 11.02.2016թ. հայտերի N 2 հավելվածներով ներկայացված հայտարարությունները հանդիսանում են Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակում կեղծ տվյալի ներկայացում:

Անհրաժեշտ է նշել, որ Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում մասնակցին ներառելու համար **պարտադիր և միաժամանակյա առկա հիմքերն են՝**

- նույն կետի «բ» ենթակետով նախատեսված և մասնակցին վերագրվող խախտման առկայությունը,
- խախտումը թույլ տալու պահից մեկ տարվա ընթացքում մասնակցի կողմից գնման գործընթացին մասնակցելու համար հայտ ներկայացրած լինելու հանգամանքը:

Հետևաբար, Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում Ընկերությանը ներառելու համար անհրաժեշտ է, որ նույն կետով սահմանված և **Ընկերությանը վերագրվող խախտում թույլ տալու պահից մեկ տարվա ընթացքում անձը մասնակցած լինի գնման որևէ գործընթացին և ներկայացրած լինի հայտ**, քանի որ օրենքի նշված

նորմի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե վերագրվող խախտումը կատարվել է հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում:

Խորհուրդն արձանագրում է, որ «Արտաշատի պահածոների գործարան» ԲԲԸ-ի վերաբերյալ միաժամանակ առկա են Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված՝ Ցուցակում ներառելու երկու հիմքերը, քանի որ Ընկերությունը **11.01.2016թ.** մասնակցելով ՀՀ Արարատի մարզի «Մրգավանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի կողմից կազմակերպված «ԱՀԴ-ՇՀ-ԱՊՁԲ-15/2-30» ծածկագրով ընթացակարգին, ներկայացրել է կեղծ տվյալ՝ թույլ տալով Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի խախտում, այնուհետև **12.01.2016թ.** և **11.02.2016թ.** կրկին հայտեր է ներկայացրել համապատասխանաբար «Այնթապի Արամ և Հասմիկ Կարամանուկյանների անվան թիվ 1 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի կողմից կազմակերպված «ԱՅՆ1ՄԴ-ՇՀԱՊՁԲ-16/1» և ՀՀ Սյունիքի մարզի «Կապանի թիվ 1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կողմից կազմակերպված «ԿՄՀԴ-ՇՀԱՊՁԲ-16/2» ծածկագրերով գնման ընթացակարգերին, որոնց ընթացքում նույնպես թույլ է տվել Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի խախտում:

Կարգի 125-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ Օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված՝ գնումների բողոքարկման խորհրդի ընդունած որոշման հիման վրա մասնակիցը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է՝ **6 ամիս ժամկետով**, եթե ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որի հետևանքով տուժանքի, հաշվարկված վնասի, տույժի կամ տուգանքի չափը չի գերազանցում գնումների բազային միավորը և մինչև բողոքարկման խորհրդի կողմից համապատասխան որոշում ընդունվելը՝ պատճառված վնասը, հաշվարկված տույժը կամ տուժանքը վերականգնվել է կամ, **եթե Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունեցել ժամկետանց հարկային պարտավորություններ** կամ որակավորման չափանիշների, իսկ ապրանքների գնման դեպքում՝ նաև տեխնիկական բնութագրերի գնահատման

արդյունքում այդ որակավորման չափանիշները կամ տեխնիկական բնութագրերը որակվել են որպես մասնակցի կողմից ներկայացված հայտարարություններին չհամապատասխանող:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց


ՀՀ ֆինանսների նախարարության 21.04.2016թ. թիվ 1/73-1/12587-16, 11.05.2016թ. թիվ 1/73-1/13942-16 և 24.06.2016թ. թիվ 1/73-1/17115-16 գրություններով ներկայացված «Արտաշատի պահածոների գործարան» ԲԲԸ-ին (ՀՎՀՀ 04200616) ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կայացվելու օրվանից հաշված 6 ամիս ժամկետով:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:


Բողոքը քննող հանձնաժողով՝

Նախագահ՝



Գևորգ Հայրապետյան

Անդամ՝



Հայկ Կոշեցյան